

Եթէ այս տեսակէտէն զիտենք, բոլորովին ուրիշ կերպարանք կը ստանայ դէպի Ատրպատական յարձակումը, այն սպառնալից վտանգները կ'ունենանք, թէ Տիգրան պարթևական պատերազմին առիթ տուած է, վասն զի Կորբուզոն վայրկեանը եկած կը համարէր: Եւ իմ կարծիքովս, կրնանք գտնել նաև այն պատճառները, որոնք Կորբուզոնը պարթևական մարտին վերաբերու սպառնացող պարտութիւնը պարթևերու հակառակորդին նշանակելի ուժեղացում մը կը խոստանար եւ միանգամայն ծանրապէս խնդրական կը դարձնէր պարթև պետութեան բաժանումին վրայ հաստատուած տիրակալութեան ծրագրերնէր: Հայաստանի բաժանումը մենամարտը պատահաբար չէ որ վերջանեան պետութեան ազատութիւնը բերած է, այլ Հոռոմ զիտմամբ ձեռնարկած է անոր, որպէս զի վերջաններու վերստին պարթև պետութեան իշխանութեան ենթարկուին արդէն է:

Եւ թէ այս քաղաքականութեան թելերը, ոչ թէ մինչեւ Կորբուզոն, այլ մինչեւ շատ աւելի բարձր շրջանակներ կը հասնին, կը տեսնուի զարձեալ արեւելքի դէպքերուն կը իրատեսական իրազարձութիւններու վրայ ըրիտանական իրազարձութիւններու Կլաւտալ թերած ազդեցութենէն: Յուլիոս Կլաւտոսի պարծակատարը, որուն կայսրը պաշտօն տուած էր Սուեանիսուր չափաւոր եւ հանդարտ քաղաքականութեան մը յորդորելու, արդէն 60 տարեայ աշնան Բրիտանիա հասած էր:

Ուրեմն Հոռոմի մէջ Տիգրանի յարձակողականէն քանի մը շարաթ վերջը արդէն կը կանխատեսէին թէ պարթևական մարտը 61 տարեայ դարնան պիտի սկսէր: Այսպէս ուրեմն ո՛չ թէ անխոհեմ աւատարուի մը անժամանակ մէկ արարքը, այլ իմաստուն կառավարութեան մը հեռատես հաշիւները պարթևական նոր պատերազմի մը սկիզբը տուած են:

(Շարունակելի):

Թրգով. չ. Մ. Հնդկոցն



ՅՈՒՍԵՓ ԱՐՔԵՊՐՍՈՎՈՍ ՏԵՐ ՄԱՐՈՒԳԵԱՆ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

Տասեւիններորդ դարի առաջին կիսում էջմիածնի հոգեւորականութեան շարքերում առանձին տեղ է զբաղում Յովսէփ վարդապետ Վեհապետեանը. նա խոշոր դեր էր խաղում էջմիածնում դեռ Ներսէս Աշտարակեցու Թիֆլիզի առաջնորդ եղած ժամանակ. այդ դերը զգալի դարձաւ մասնաւոր այն ժամանակ, երբ Ներսէսը հեռանալով Թիֆլիզից՝ Յովսէփին թողեց էջմիածնում արտակարգ լիազօրութիւններով: Սրան է ուղղուած առաջինը Ուշատուր Աբովեանի չորս նամակներից, որոնք հրատարակուեցին «Հանդէս Ամսօրեայ»ում:

Յովսէփ վարդապետը սկզբում Տէր Մարտիկան էր զբաղում եւ բնիկ Կարբեցի էր. Տէր Մարտիկը նրա հայրն էր, ժամանակի յայտնի քահանաներից մէկը, որին Ու. Աբովեան հանդէս է բերում «Վէրք Հայաստանի» մէջ Աղասու թաղման սղբերգական ընկնում, երբ աչքերի լոյսից զրկուած եւ անդամալոյծ դարձած Մուսէն գալիս է եւ ընկնում նրա ոտները: Քահանան սղորմութիւն է տալիս նրան, բայց յետոյ գլխի ընկնելով, որ նա անօրէնները զոհն է, վրդովուած է եւ անէծք կարգում նրան անբախտացնողներին:

Յովսէփ վարդապետն աչքի էր ընկնում իր արտասովոր եռանդով ու կամքի ուժով, որ չէր կարող վրիպել Ներսէս Աշտարակեցու արձուի հայեացքից. եւ նա Տէր Մարտիկանին մօտեցրեց իրեն: Շուտով մենք տեսնում ենք, որ Յովսէփ վարդապետը այնպիսի ծառայութիւններ է ցոյց տուել տէրութեան ուս-պարսկական պատերազմի ժամանակ, որ արժանացել է Ս. Աննայի Գ. աստիճանի շքանշանի, որ իրստ հազուատես իր երեւոյթ էր այն ժամանակները: Այդ մասին 1828 թ. Նոյեմբերի 22ին նրան զրուեց առանձին կայսերական հրաման հետեւալ օրինակով.

Ողորմութեամբ Աստուծոյ Մեք Նիկողայոս Առաջին Կայսր եւ ինքնակալ ամենայն ուստաց եւ այլոց եւ այլոց է:

Յովսէփայ վարդապետի Հայոց. Ի վարձատրութիւն ծառայութեանցն զորս ցուցիք դուք յանցեալ պատերազմին

ընդ պարսից, ամենաողորմածարար համաթուեցաք Մեք զձեզ հրովարտակաւ ի 19 երրորդ աւուր Նոյեմբերի 1828 ամի, ընդ նշանակիրս սրբոյ Աննայի երրորդ աստիճանի:

Չհրովարտակա զայս ի վկայութիւն ստորագրել օրդինական կնքով հաստատել, եւ զնշանն օրդինական առաքել առ ձեզ հրամայեցաք մեք ուսական կայսերական նշանաց խորհրդարանին:

Տուեալ եղեւ ի Սանկտ Պետերբուրգ ի 22 երրորդ աւուր Նոյեմբերի 1828 ամի

ուսաց կայսերական նշանաց

Կանցլեր Կնեզ Աղեքսանդր Կուրակին.

Նիկողայոս կայսր.

Տէր Մարուզեանը մեծ զխառնութեան տէր չէր, նրա պատահարար մեզ հասած զրութիւնները լի են սխալներով. բայց ինչպէս ասացինք, նա ունէր աննկուն կամք եւ զօրեղ փառասիրութիւն եւ կոթնած այդ երկու մղիչ ուժերին, նա նետուեց համարձակ այն ժամանակուայ փորձութիւնների ծովը: Նա չէր կարող չչլանալ Ներսէսի փառքով, որին նա յիշեցնում էր փոքր մասշտաբով: Եւ նա կարողացաւ այնքան դուր գալ Ներսէսին, որ վերջինս Բեսսարաբիա դնալիս Տէր Մարուզեանին կարգեց վերակազմուած Սինոդի անդամ եւ նրան յանձնեց էջմիածնի համարեա բոլոր դորձերի կառավարութիւնը եւ դանձր եւ պատուիրեց ղեկուցումներ ուղարկել իրեն Բեսսարաբիա: Յովսէփը, ի հարկէ, չունէր ոչ Ներսէսի պայծառ միտքն ու զարգացումը, եւ ոչ էլ նրա հեռատեսութիւնն ու բարձր ձգտումները. բայց նա ունէր Ներսէսին հաւատար կերպով կամք եւ զբաղրայ աւելանում էր նրա որոշ յատկութիւնը՝ միջոցների մէջ խտրութիւն չգնել: Նա սարսափ էր տարածել վանական միաբանութեան վրայ եւ յայտնի էր էջմիածնում «պատիւի Ներսէս» մականունով: Կարբեցին վկայում է, որ Ներսէսը յանձնարարել էր նրան վարուել ամենքի հեռոնութեամբ՝ «երկաթէ գաւազանով» եւ նա այդ «երկաթէ գաւազանով» յաճախ սպառնում էր Սինոդի անդամներին: Պատկերիչը նրա մասին գրում էր, որ Եփրեմ կաթողիկոսը ստորագրուած էր Յովսէփին եւ չէր համարձակուում նրա իշխանութիւնից դուրս

գալ. միաբանները հեծում էին Յովսէփի ճնշումներից եւ կամենում էին թողնել վանքն ու ցրուել: Գուցէ այստեղ չափազանցութիւն կայ, բայց այլ առթիւ կը տեսնենք, որ միաբանները փոխուած պայմաններում ո՛չ թէ ցրուում են, այլ միաբանում են Յովսէփի դէմ եւ պահանջում են նրա արտաքսումը Սինոդից, հաշուետուութիւն եւ հեռացումն էջմիածնից:

Յովսէփն էջմիածնում արթուն հսկում էր Ներսէսի թշնամիներուն եւ միեւնոյն ժամանակ միջոցներ էր ձեռք առնում Ներսէսին վերադարձնելու պատուաւոր արտօրից: 1828 թ. Հոկտեմբերի 13ին Եփրեմ կաթողիկոսի անունով կազմուած մի խնդրագրի տակ Ներսէսին Բեսսարաբիայից դարձնելու մասին մենք գտնում ենք Յովսէփի վարդապետի ստորագրութիւնը. քանի որ նրա կողքին իւր ստորագրութիւնը դրել է Յովհաննէս Կարբեցին, Ներսէսի ոխերիմ թշնամին, պարզ է, որ այդ եղել է Յովսէփի ճնշման տակ:

Յովսէփի վարդապետն իր թշնամիները կողմից մեղադրուած էր սուտ լուրեր տարածելու մէջ. Պատկերիչը ազբիւր ունենալով Սերովբէ վարդապետին, վրդովուած էր, Յովսէփը եւ Ալամզարեանը տարածում են, իբր թէ Ներսէսը չուտով կը վերադառնայ Վրաստան որպէս կաթողիկոսի լիազօր օգնական եւ որ մի ամբողջ տարի ոչ ոք չի նշանակուել Հաչտարխանի առաջնորդ եւ դորձը կը ձգձգուի մինչեւ Ներսէսի վերադառնալը: Այս մեղադրանքը հիմնաւոր էր. Յովսէփը ստանում էր թղթեր Ներսէսից եւ Ալամզարեանից. մի նամակում, ուղղուած Յովսէփին, Սիմէոն Բզնունեանը եւ Յ. Ալամզարեանը, Ներսէսի ջերմ կուսակիցները, որոնց յանձնել էր Ներսէսը Թիֆլիզի թեմի կառավարութիւնը Բեսսարաբիա դնալիս, ոչ միայն պնդում են, որ Ներսէսը վերադառնալու է չուտով Բեսսարաբիայից, այլ եւ ցոյց են տալիս իրենց անսահման անձուկրութիւնը դէպի նա հեռուեալ խօսքերով. «Եթէ մեռանել հասանիցէ՝ մեզ նախ ի դէպ է մերովս մահուամբ զմահու դուռն Ձեզ բանալ» եւ այլն. եւ ի պատիւ նրանց, պէտք է նկատել, որ փորձութիւնների շրջանում նրանք երկուսն էլ հաւատարիմ մնացին Ներսէսին. այլ բան էր Յովսէփը...

Յովսէփը ոչ միայն քաջալերական թղթեր էր ստանում Թիֆլիզից, այլ եւ

վարդապետին և պատուիրեց «Հայոց աշխարհի» նահանգապետ իշխան Բէհրուզեանին ուղեկցել նրան Էջմիածին և հարկադրել Յփրեմ կաթողիկոսին եպիսկոպոսացնել Սերովբէին: Միաժամանակ պատուիրուած էր Երկսին էլ ամէն միջոց գործ դնել իրենց կողմը զբաւելու միաբաններին մի քանիսին, մանաւանդ Յովսէփ վարդապետին: Իշխան Բէհրուզեանը Յովսէփի հետ մի քանի տեսակցութիւններ ունեցաւ և Մայիսի 24ին նա զրուած էր «պատրիկ Ներսէսի» մասին կոմս Պասկեւիչին. «Յովսէփը, որ մի խելացի և ճարպիկ վարդապետ է, այժմ կառավարիչ է Էջմիածնի տնտեսական մասի, անգամ է այստեղի Սինոդի և մեծ ազդեցութիւն ունէ թէ վանքի գործերի վրայ, թէ պատրիարքի և թէ նոյն իսկ (Սինոդի) անդամների վրայ... Ես կարող եմ Ձեզ հաւատացնել, որ այսօրուանից Յովսէփ վարդապետի արարքները համապատասխան կը լինի իմ նրան տուած խրատներին և նշանաւոր գործերում թէ պատրիարքը և թէ Սինոդի անգամք կը դառնան դէպի ինձ խորհուրդներ հարցնելու» («Կովկասի Հայք», մ. Ա, էջ 586, 87): Եւ երբ Պասկեւիչը հրաւիրուեց մայրաքաղաք, որտեղից պէտք է Լեհաստան մեկնէր այստեղի ապստամբութիւնը ճնշելու, իր օգնական զօրավար Պանկրատիեւին թողած գաղտնի հրամանագրի մէջ յայտնուած էր. «Յովսէփ վարդապետի տեղափոխութեան մասին նմանապէս բարձրագոյն հաճութիւն կայացաւ (տ. վերը), բայց երբ գեներալ մայօր իշխան Բէհրուզովը (որ այս առարկայի վերաբերութեամբ շատ լաւ է գործում) հաղորդեց, թէ Յովսէփը փոխել է իւր վարքը, այդ բարձրագոյն հրամանաց ի կատար ածելը մի առ ժամանակ յետաձգուեցաւ (ibid. 655)....:

Այսպէս ահա սկիզբն է զրուած Յովսէփ վարդապետի գործունէութեան միւս ճակատի վրայ... Կարգուած է նորագործ վարդապետների մի երրորդութիւն, որի մէջ մտնում են Յովսէփ վարդապետ, Յովհաննէս վարդապետ Արիմեցի և Առաքա վարդապետ Տէր Միքայէլեան Մաստարեցի, որոնց միանում է նաեւ Կեսարացի Բարսեղ արքեպիսկոպոսը և նրանք սկսում են գործել մութ գործեր յօղուտ Յովհաննէս Կարբեցու, որ Թիֆլիզից օրհնում էր նրանց գործունէութիւնը, անվերջ հրահանգներ էր

ուղարկում և հետուից հրատարակել վարագոյրը բարձրացնում:

Ներսէսը Բեսարաբիայից նկատում էր Յարութիւն Շերմազանեանին զրած մի նամակում (տ. «Կովկասի Հայք», մ. Բ, էջ 152). «Եւ դու մի զարմանար, թէ Յովսէփ վարդապետն արարեալ իցէ այնպէս, որպէս սպիրատ առ իս, այլ լէր ուշադիր, թէ նա և կամ զերագոյնքն քան զնա՝ զի՞նչ արարին ընդ անձանց իւրեանց և ընդ եկեղեցի սուրբ, որոց անուանեն զինքեանս պաշտօնեայս»...

Բայց ժամանակ էր եպիսկոպոսական աստիճան ընդունելու... և շնորհապարտ Յովհաննէս Կարբեցին, արդէն կաթողիկոս, իր անդրանիկ ձեռնադրութեան (1832 թ., Մայիսի 15ին) արժանացրեց Յովսէփ և Առաքա վարդապետներին երեք այլ վարդապետների հետ (Արիմեցին այդ ժամանակ չեղուել էր «ուղիղ» ճանապարհից և պատուհասուել¹... Այդ ժամանակից Յովսէփը վերջնականապէս թողեց իր Տէր-Մարտիան ազգանունը և ստորագրում էր բացառապէս «Վեհապետեան»: 1835 թ. Յունիսի 25ին Յովսէփ եպիսկոպոսը ծայրագունութիւն ստացաւ աւագ լուսարար Բարսեղ արքեպիսկոպոս Կեսարացու հետ, ով նոյնպէս երբեմն Ներսէսի կուսակից էր, բայց իշխան Բէհրուզեանի Էջմիածին այցելելուց յետոյ մօտեցել էր վարդապետները երրորդութեանը...

Յովսէփ եպիսկոպոսը Յովհաննէս Կարբեցու բանակում գործում էր նոյնպիսի դատաւարութեամբ, ինչպէս և Ներսէսի: Նա քինախնդիր էր և զիտէր նուաստացնել իր հակառակորդներին. նրա նախկին գործակից Յովհաննէս վարդապետ Արիմեցին սարսափով էր զանդատուում իր հալածիչ Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսին այն մասին, որ երբ Յովսէփ եպիսկոպոսը խորհրդական թոմաս Արղւննովի հետ եկել էր նրան՝ Արիմեցուն համոզելու, որ նա վերջ տալ հակամարտութեան ընդդէմ Կարբեցու, «յս խորտանօք իմն իսուէր ընդ իս, դատաւարաբար և ոչ միջնորդաբար»... «Նա տակաւին միտեալ ունի յաման խորհրդոց իւրոց գմաղձ դառնութեան դժնեայ ոխութեան առաջին թշնամութեան իւրոյ և ատելութեան առ իս»... Արիմեցին խնդրում էր ոչ մի

¹ Այդ մասին տ. մեր «Կիսնական Յովհաննէս վարդապետ Սուրէնեան Արիմեցի»:

վճիռ չկայացնել նրա վերաբերմամբ Յով-
սէփ եպիսկոպոսի մատնակցութեամբ...

Յովսէփ եպիսկոպոսի վայրագութիւն-
ները վերջապէս էջմիածնի միաբանութեան
«Հասարակութեան» մէջ ըմբոստացում ա-
ռաջացրին ընդդէմ սանձարձակ եպիսկո-
պոսի. այդ մասին հետաքրքիր տեղեկու-
թիւններ է պարունակում միաբանութեան
անդամներէ հետեւեալ բողոքագիրը Յով-
սանէտ Կարբեցի կաթողիկոսին.

Նորին վեհափառ սրբազնութեան աս-
տուածարեալ Տեանն Յովսաննու Կաթողի-
կոսի ամենայն հայոց, եւ ծայրագոյն պա-
տրիարքի սուրբ Աթոռոյս էջմիածնի եւ կա-
ւարբի.

Ի Հասարակութենէ Միաբանութեան
Աթոռոյս
Ամենախոնարհ խնդիր.

Սուրբ Աթոռ Մայր մեր այս եւ բոլոր
որդիքս նորին առհասարակ կոչկոծեալ ան-
ընդհատ ի բազում եւ ի զանազան նեղու-
թիւնս եւ ի տառապանս յաւուրս իշխանու-
թեան պարսից՝ մեծ էր յոյս մեր, թէ յետ
որոյ վիճակեցաք ի ներքոյ թեւոց քաղցրա-
խնամ հովանաւորութեան Քրիստոսազօր
կայսերութեան ուսաց, անշուշտ ունիմք
գտանել զհանդիստ եւ զանդորութիւն. եւ
արգասիքն եւս ամենայն հարկաւոր բարեաց
որ յօգուտ Աթոռոյ եւ Հասարակութեան՝ օր
գհետէ զհակառակն տեսաք զլիսովին: —
Գոհանամք զԱստուծոյ մերոյ, զի ազատիմք
զլիսովին ի պարսկական բռնաւորութեանց
եւ հարստահարութեանց եւ Նորին կայսե-
զան ինամակալութեանց եւս Նորին կայսե-
րական Մեծութեան անպակաս առատացեալ
գտան եւ են առ Աթոռս եւ առ մեզ. զոր չէ
մարթ ուրանալ, սակայն եւ այնպէս միշտ
տեսաք զմեզ ի վշտաց ի վիշտս յառաջա-
ցեալ: Եւ թէ ի՞նչ իցեն պատճառք այսորիկ,
չեղեւ ինչ փոյթ եւ մեծ նկատել արժանա-
պէս, եւ ի գործ զնել հնարս առ ի բառնալ
զայնս:

Սակայն մեք առ ժամս տեսանելով եւ
ճանաչելով խոհութեամբ՝ մի յերեւելի պատ-
ճառաց արկածիս զՅովսէփ եպիսկոպոսն Տէր
Մարուգեանց զանգամ Սինթի եւ գասպեա՝
ստիպիմք համարձակիլ եւ առաջի առնել
պատկառելի Քահանայապետութեան ձերում
զխնդիր ի մասին նորա յատկապէս, թէ նա՝

լստ որում քաջ յայտնի է եւ ձերում բարձր
վեհափառութեան, յամենայն ժամանակս
գտանելոյ իւրոյ ի պաշտօնս կառավարու-
թեան Աթոռոյն՝ յանհնարինս վշտացոյց
կրկին կերպիւ. մի
զհասարակութիւնն կրկին կերպիւ. մի
պատճառ տալով կառավարութեան Աթո-
ռոյն, իբր զի թշնամի գոլով ի բնէ կանո-
նաւոր բարեկարգ կառավարութեան՝ արգել
նաւոր գտաւ յամենայն ժամանակի, եւ պատ-
այնմ գտաւ յամենայն ժամանակի, եւ պատ-
ճառ առաւել եւս խանդարմանց նորին՝ եւ
երկրորդ՝ հասարակաց եւս թշնամի գոլով՝
ինքնին անմիջապէս բազում իբօք գտաւ
վշտացուցիչ նոցին. վասն որոյ եւ անգր
քան զչափն առաւել տաղալակլի եղեւ նա
բոլոր հասարակութեան հողեւորականացս:
Ո՛չ է անձանօթ վեհափառութեան ձե-
րում՝ հողեւոր Տէր, եւ այն, թէ նա ի բո-
լոր ընթացս լինելոյ իւրոյ ի զանազան պաշ-
տօնս՝ գտանելով զպաշտպանութիւնս եւ զհա-
մարձակութիւնս ի մեծաւորաց իւրոց՝ ոչ ըստ
իրաւանց եւ արգարութեան, այլ միայն
ըստ պատիր ճարպկութեան իւրոյ ի բանս
եւ ի գործս, ո՛չ եթող չարիս կամ զապի-
րատութիւնս՝ զոր ո՛չ իշխեաց գործել ի
զանազան ժամանակս ի վրաս Աթոռոյն, եւ
ի վրաս միանգամայն եւ ի գայթակցու-
թիւն բոլոր Հասարակութեան, եւ թէ ի
սկզբանէ եւ այսր յամենայն զնացս իւր միշտ
խորանէ եւ այսր յամենայն զնացս իւր միշտ
յայտնեաց նա զանձն՝ այլ խոտովարար եւ
խարդախ, նենդաւոր եւ անհաւատարիմ:
Եւ թէ բարւոք հայեցողութեամբ քննեսցին,
որ ի ամենայն արարք նորին կամ զնացք՝ որ ի
վրաս Աթոռոյն եւ Հասարակութեան, թէ ոչ
ըստ բոլորին, գտնէ ըստ մասին՝ հային եւ
ի վրաս Տէրութեան:

Եւ սակայն այսու ամենայնիւ՝ նա իւրով
չարարուեստ հնարաղիտութեամբն ոչ միայն
մնաց անպատիժ, այլ եւ որպէս հաւատարիմ
վաստակաւոր ոք ընկալաւ եւ զաթեւթաթս
չնորհակալութեան, որով եւ մեծամեծս
պարծի նա, թէ այսչափ եւ այնչափ ծա-
ռայութիւնս է ցուցեալ առ Աթոռն: Եւ սա-
կայն լուսապէս յայտնի է ամենեցուն թէ նա
ըստ ամենախարդախ բնութեան իւրոյ, եւ
ըստ անձին միայն շահախնդրութեան՝ որով
կերպիւ ծառայեաց եւ ո՞րպիսի զնացիւք
յամենայն պարտաւորութիւնն իւր: Գիտեմք
եւս, թէ որով հնարիւք էառ նա զայն-
պիսի աթեւթաթս, որոց չէր արժանի ամե-
նելին, եւ կարծեմք թէ, եթէ բարւոք
քննեսցին, կամ ոչինչ՝ եւ կամ յոյժ սա-
կաւք ի ծառայութեանց նորին ի յայտ

եկեսցեն ըստ ամենայնի անարտո հաւատարմութեամբ գործեալք: Չէ անյայտ եւ այն, թէ որք ետունն նմա զայնպիսի ամթեսթաթս՝ քաջ գիտէին, թէ նա ըստ յայտնի ասիրատութեանց իւրոց չէր արժանի այնոցիկ, սակայն եւ այնպէս բարւոք զատեցան տալ՝ իբրու ընտրելով զիւրքագոյն չարն՝ առ ի տալ խափանումն մեծագոյն չարին. որովհետեւ բանալիք գրեթէ ամենայն զազոնեաց եւ բազում իրողութեանց Աթոռոյն, որպէս եւ շատ հարկաւոր գրուածք եւ թուղթք՝ միանգամ անցեալ էր՝ ի ձեռս նրա, եւ կարէր վնաս մեծ տալ Աթոռոյն. եւ ոչինչ էր դժուարին ասիրատ բարուց նորա առնել զայս առանց ամենայն խղճահարութեանց:

Ի ուր Հասարակութիւն հոգեւորականացս յետ այսչափ ընդ երկար համբերութեան ամենայն չարեաց նորին, ի վախճան ամենայնի գոյս իւր հաստատեալ էր յայն, թէ յետ ընդունելոյ վեհափառութեան ձերոյ զիշխանութիւնդ պատրիարկական, անշուշտ հրաժարեցուցի նա յամենայն պարտաւորութեանց, եւ այնպէս տացի հանգիստ եւ ազատութիւն Աթոռոյն եւ հասարակութեանս ի չարեաց նորին. եւ սակայն երբ յառաջ զհակառակն տեսաք, թէ նա ոչ միայն եւ ի ձէնջ զպաշտպանութիւն եզրտ, այլ եւ զաստիճան եպիսկոպոսութեան եւս ընկալաւ, որում չէր արժանի, եւ ի վերայ այնորիկ ընտրեցաւ եւս որպէս հաւատարմագոյն ոք զնալ ի Թիֆլիս առ բարձր գերազանց կուսակալն ընծայատարութեամբ եւ այլ գործովք, զայթակղեցաք ի միտս մեծապէս: Այլ այժմ տեսանելով մեր, զի վեհափառ սրբազնութիւն ձեր՝ բարի զիտաւորութեամբ սկսեալ է զամենայն պաշտօնս նորա յանձնել ի ձեռս այլոց, առ այս մատուցանելով սրբազնակատարութեան ձերում զմեծագոյն շնորհակալութիւն մեր՝ յաւելումք ինչդրել ամենախոնարհաբար, հոգեւոր Տէր, զի բարեհաճեալք հրաժարեցուցանել զնա եւ յանդամակցութենէ Սինթին, զի այնպէս բոլորովմբ հատեալ զոլով նրա յամենայն պարտաւորութեանց՝ հնար լիցի թերեւս կառավարութեան Աթոռոյն հեռոցեալ յառաջանալ ի պարտուպատշաճ կարգաւորութիւն իւր, եւ հասարակութիւնս յանգործութիւն իւր եւ ի բարին:

Եւ զի ամենայն տուժարք նորին եւ գործք եւ եղանակք կառավարութեանց

իւրոց յամենայն պաշտօնս իւր կարօտին օրինաւոր քննութեան, եւ ինքն եւս պարտաւորի տալ զհաշիւ ամենայն գործին իւրոց, վասն որոյ յետ զալտեան իւրոյ ներեցի նմա կալ մնալ յառանձին խցին ի կարգի հասարակաց Միարանութեան՝ մինչեւ ավարտեցի քննութիւնն ի մասին նորա. եւ զինի այնորիկ՝ եթէ արժան զատեցի, առաքեցի նա արտաքին հոգեւորական գործով ի վիճակ ինչ ուր եւ պատշաճն իցէ. եւ մի՛ կարգեցի նա յայճեալէ ընաւին ի պաշտօն ինչ ներքին կառավարութեանց Աթոռոյն:

Ի Սբ. Էջմիածին, Թ. 1, Յուլիսի 1832:

Բարձր վեհափառութեան ձերում
Ամենախոնարհ ծառայք

Ստեփաննոս Եպիսկոպոս	Սուքիաս Եպիսկոպոս
Յակոբ վարդապետ մշեցի	Յովհաննէս վարդապետ վաղարշապատցի
Փիլիպպոս վարդապետ	Արբահամ վարդապետ Պոլսեցի Յովհաննէս վարդապետ Անտոն Եպիսկոպոս
Գէորգ վարդապետ Ժամ օրհնող	Կարապետ վարդապետ չորասպան
Յարութիւն վարդապետ վանեցի	Միքայէլ վարդապետ լուսարար
Եփրեմ վարդապետ Ժղնովցի	Ղուկաս վարդապետ տնտես
Մեսրոբ վարդապետ լուսարար	Մովսէս սարկաւազ

Յիշենք Յովսէփ Եպիսկոպոսի մի յատկութիւնը եւս, որ ակնարկուած է այլ թղթում եւ որը մասին յայտնում է Յովհաննէս վարդապետ Ղրիմեցին. յիշելով, որ Կարեցին «սովորեցաւ կորզել բազում ինչ ի սեպհական հասից եւ յարգեանց Աթոռոյն»... աւելացնում է. «Եւ յայսպիսով երեւելի են եւ գլխաւորք ի ներքս յԱթոռոյն Յովսէփ Եպիսկոպոսն Տէր Մարուգեան Եւսապետ, իսկ արտաքոյ՝ Ստեփաննոս Եպիսկոպոսն Արղւութեանց, որ է յաջորդ Թիֆլիզոյ» (տ. «Գիտնական Յովհ. վարդապետ Սուրէնեան Ղրիմեցի»):

